

ՄԵՆԱԴՐ ասէ. Զի՞նչ է որ վերաձգին որպէս փայղակն, զոր անուար
և յողողողք աստեղաձիգք կոչեն:

ԵՊԻՓԱՆ ասէ. Ո՛չ, մի՛ լիցի. այնպիսիքն տխմարք են որ զայդն առեն,
այդ այն ձգտումն է ի հրոյ եւ ի վերին արփոյն. զի աստեղք ոչ փոփոխին
յիւրեանց տեղեացն, եւ ոչ ձգտումն առնուն յինքեանս. քան զի և ոչ շար-
ժին յիւրաքանչիւր տեղեաց. եւ ոչ աստեղք զաստեղաւք վազս առնուն,
այդ այս տեսակ այսպէս շաղաւարի, զի զերկինն հրով և ջրով պատեալ է:
Եւ չիք արարած առանց հրոյ եւ ջրոյ, եւ յորժամ ձգտումն լինի ի հրոյն,
վազվազակի հարկանէ զնա եթերն, անսի լինի ձգտումն եւ ոչ տայ նմա
աւզն անկանել յերկիր, այդ անպէն շիջուցանէ զհուրն ձգտեալ* ։

ՎԱԽՃԱՆ ԱՄԵՆԱՅԵՆԻ

Ի՞նչ է վախճան ամենայնի, կեանք՝ թէ արդեօք գերեզման՝ .
Մի՛թէ ալի՞քն՝ յոր ծրփանք, կամ թէ կոհակն՝ ուր գլորինք :
Այնչափ անթիւ քայլերու ի՞նչ է նպատակն հեռաւոր .
Ըզմարդն արդեօք բովանդակէ որրան՝ եթէ զնակատագի՞ր :
Մեր ամենայն վայելից կամ աղիտից մէջ իցե՞մք
Մի՛թէ արքայք սահմանեալք և կամ ըստրուկք եղկելիք :
Ըսէ՞ մեզ, Տէր, ըսէ՞ մեզ, ամենազօր մեծդ Աստուած,
Արդեօք միայն բախտի՞ն համար լստեղծեցիր զու ըզմարդ .
Ո՛հ, թէ արդեօք մըսոյն մէջ կայ ծածկըւած Գողգոթայն .
Եւ կամ մի՛թէ բոյնք փափկիկք՝ ոսկեզօծեալք զով այգուն,
Դեռաբուսիկ ուր փետուր ծաղկանց միջն կը փրթթի,
Թըռչնո՞ց համար են շինուած՝ կամ թէ արդեօք որորդանց :

ՎԻԿՏՈՐ ՀԻԻԳՈՅ

Ներքին ճայնք . — Տաղ Գ

* Ի լս. աւելցուցած է. Եւ է պատճառ շրջանն վերին երկնիցն, զի ի յոյժ բախ-
մանէ շիջմանն՝ լոյսն հրախառն հասանի ցայտելով, եւ անցանի Թափ ընդ ամե-
նայն. ըստ այնմ զոր ասէ. Գիտիցեն գլորվանակս երկնից, զոր միայնոյ Աստուծոյ
է զիտելի և Թուելի: